ԽՈՒՌԱՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԵՇՈՒԲ/ԹԵՅՇԵԲԱՅԻ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԹԵՍԵՎՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Արմեն Պետրոսյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ alpehit@gmail.com
ORCID: 0000-0002-1982-5593
Հոդվածը ներկայացվել է 03.11.2022, գրախոսվել է 15.03.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-239

Ամփոփում

Հայաստանի հնագույն հուշարձաններից առավել աչքի ընկնողներն են հսկայական վիշապաքարերը, որոնց առաջին օրինակները թվագրվում են միջին բրոնզի դարի սկզբով (մ.թ.ա. XXIV դ.): Մանրամասն քննարկումը ցույց է տալիս, դրանք եղել են հնդեվրոպական ամպրոպային առասպելի ատրիբուտներ և մինչև իրանական *վիշապ* բառի փոխառումը կոչվել են ամպրոպի աստծու հակառակորդ առասպելական օձ-վիշապի հնդեվրոպական անունով (գեղ < *wel-): Այդ առասպելի արձագանքներն ի հայտ են գալիս նաև Հայաստանի նախաուրարտական դարաշրջանի այլ հնագիտական հուշարձաններում:

Հնդեվրոպական ամպրոպի աստվածը եղել է ռազմական գործառության կրող և մարմնավորել է արխաիկ ռազմիկի կերպարը: Նրա զենքն էր մուրճը կամ տապարը, իսկ սիմվոլը՝ ցուլը: Խուռաուրարտական ամպրոպի աստծու անունը (խուռ. Teššub, ուրարտ. Teišeba /Theišewa/) չունի ընդունելի ստուգաբանություն այդ լեզուներում: Նրա ատրիբուտները, սիմվոլը և առասպելը (տապար, ցուլ, հաղթանակ քարե հրեշի դեմ) հիշեցնում են հնդեվրոպական ամպրոպային աստծուն: Հոդվածում առաջարկվում է այդ դիցանվան հայկական ստուգաբանություն հնդեվրոպական *tek’s-+ *$h_1$ep- «տապար բռնող» նախաձևից: Այդ աստծու կերպարը հետագայում, հավանաբար Կիլիկիայից և Լևանտից, մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջի կիլիկյան աքայացիների միջոցով, անցել է հունական դիցաբանություն՝ որպես Թեսևս (հուն. Theseus), դառնալով Կրետեի ցիկլի առասպելների առանցքային դեմքերից մեկը:

Բանալի բառեր՝ հնդեվրոպական լեզվաբանություն, հնդեվրոպական առասպելաբանություն, ամպրոպի աստված, խուռիական առասպելաբանություն, Թեշուբ, Թեյշեբա, Թեսևս:

Ներածություն

Ուրարտական դիցարանին բնորոշ է վառ արտահայտված եռամասնությունը. այն գլխավորում են գերագույն աստված Խալդին, ամպրոպի աստված Թեյշեբան և արևի աստված Շիվինին, որոնք միասին հանդես են գալիս

բազմաթիվ բանաձևերում: Թեև դիցաբանական եռյակներ հայտնի են ամենուրեք, բայց այս դիցարանի առանձնահատկությունները համադրելի են մասնավորապես Ժ. Դյումեզիլի կողմից վերականգնված հնդեվրոպական «եռամաս գաղափարախոսության» և եռամաս դիցարանների հետ[1]: Գիտության ներկա զարգացումը թույլ է տալիս ասել, որ հնդեվրոպացիների և հատկապես վաղնջահայերի ներկայությունը Անդրկովկասում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսից կասկած չի հարուցում[2]: Ըստ այդմ, խուռաուրարտական մշակույթի և կրոնի վրա հնարավոր է հայկական ազդեցությունը: Հնդեվրոպական ավանդույթում ամպրոպի աստծու առասպելն այնպիսի կենտրոնական դեր է գրավում, որ այն կոչվել է «հիմնական առասպել»[3]: Հնդեվրոպական տեսք ունի նաև ուրարտական Թեյշեբայի խուռիական համապատասխանության՝ Թեշուբի հակառակորդ Ուլլիկումմիի անունը: Այսինքն՝ հնդեվրոպական ամպրոպային առասպելը միանգամայն կարող էր փոխառվել խուռաուրարտական ավանդույթում: Ավելին, Խալդիի կերպարը նույնական է վաղնջահայ դիցարանի մեծ աստծու կերպարի հետ[4], իսկ Շիվինիի անունը խեթական ծագում ունի: Այսպիսով, բացատրվում է ուրարտական դիցարանի հնդեվրոպական կառույցի ծագումը: Իսկ հին Հունաստանի մեծագույն հերոսներից Թեսևսի անվան նմանությունը Թեյշեբային և առասպելի մանրամասնությունները անբաժանելի են դարձնում նրան Թեշուբ/Թեյշեբայից և, այսպիսով՝ փոխառված են նրանից և նրա վաղնջահայ նախատիպից:

Հայկական լեռնաշխարհը հնդեվրոպական միգրացիաների համատեքստում

2022 թ. "Science" հանդեսում հրատարակվեց նույն հեղինակային խմբի երեք հոդված Հարավային Եվրոպայի և Արևմտյան Ասիայի որոշ երկրամասերի հին բնակչության հնագենետիկայի վերաբերյալ, որոնց հիման վրա վերջնականապես ճշտվում են հնդեվրոպական նախահայրենիքի և վաղ միգրացիաների մասին եղած վարկածները[5]: Ըստ այդմ, հնագույն հնդխեթական (կամ՝ հնդանատոլիական) հանրույթը տեղայնացվում է Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում: Մ.թ.ա. շուրջ 5000 թ.-ից այդ հանրույթի մի մասը Կովկասի վրայով անցել է հյուսիս՝ հարավռուսական տափաստաններ: Այնտեղ նրանք խառնվել են տեղական բնակչության հետ, ձեռք բերել նոր հատկանիշներ: Այդպես ձևավորվել է բուն հնդեվրոպական՝

[1] Պետրոսյան 2002.
[2] Lazaridis et al. 2022a, Suppl., 280.
[3] Տե՛ս հատկապես Иванов, Топоров 1974, նույն հեղինակների այլ աշխատություններում:
[4] Պետրոսյան 2024:
[5] Lazaridis et al. 2022a, 2022b, 2022c.

ներկայումս կենդանի բոլոր հնդեվրոպական լեզուների նախնի լեզվի կրողների հանրույթը: Այնտեղից, հիմնականում մ.թ.ա. III հազարամյակում, սկիզբ են առել հնդեվրոպական մեծ գաղթերը: Այդ հանրույթի մի մասը մ.թ.ա. III հազարամյակի կեսից, նորից Կովկասի վրայով, վերադարձել է Անդրկովկաս՝ առավել խտությամբ հիմնվելով Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևելյան հատվածներում (ներկայիս Հայաստանի հանրապետության և հարակից տարածքներում՝ ուրարտական աղբյուրների Էթիունի երկրի շրջանում): Այդ մարդիկ են ստեղծել Հայկական լեռնաշխարհի միջին, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի մշակույթները (վաղ կուրգանների, Թռեղք-վանաձորյան, Սևան-արցախյան, Կարմիրվանքյան, Կարմիրբերդյան և Լճաշեն-մեծամորյան): Այդ տարածքների բնակչությունը մինչև մ.թ.ա. I հազարամյակի կեսերը 75%-ով պահպանել է իր «տափաստանային» հայրագիծ ժառանգորդությունը[6]: Այս տվյալների հիման վրա վերջնականապես մերժվում է վաղնջահայերի բալկանյան ծագման վարկածը: Իսկ ներկա հոդվածի նյութով հիմնավորվում է Հայաստանի միջինբրոնզեդարյան բնակիչների հայկական ծագումը և նրանց ազդեցությունը խուռաուրարտական մշակույթների վրա[*]:

Տապարացուլը և հնդեվրոպական ամպրոպի աստվածը

«Տապարացուլ» եզրույթը ստեղծել է Լ.Հ. Աբրահամյանը Հայաստանի վաղերկաթեդարյան (XII-IX դդ. մ.թ.ա.) թաղումներում հանդիպող մի բրոնզե արտեֆակտի համար: Առարկայի կենտրոնը գրավում է մի ելուստ, որ հիշեցնում է ցլի գլուխ և միաժամանակ՝ կացնի սայր, շրջապատված երկու կամ երեք, առջևից բաց կամ փակ կոնցենտրիկ ներգծված շրջանակներով, որոնք ելնում են, նայած թե ինչպես ենք ընկալում պատկերը՝ ցլի մարմնից կամ տապարի կոթից (աղ. 1): Ըստ հեղինակի, տապարացլի հորինվածքը կարող է լավագույնս բացատրվել հունական «Մինոտավրոսը լաբիրինթոսում» առասպելույթի միջոցով[7]: Կոնցենտրիկ շրջանները ներկայացնում են լաբիրինթոսի մի սխեմատիկ պատկեր, կենտրոնում՝ Մինոտավրոսի ցլի գլուխը, որը հիշեցնում է տապար կամ կրկնակի տապար, ինչն արտացոլում

[6] Այդ մասին մանրամասն տե՛ս Պետրոսյան, Պալյան 2023:

[*] Հոդվածը գտնվում էր տպագրության մեջ, երբ համացանցում ներկայացվեց հեղինակների նույն խմբի հաջորդ հոդվածը, որտեղ հնարավոր է համարվում, որ հնդխեթական ընդհանրությունը ձևավորվել է Կովկասյան լեռներից մինչև Վոլգայի ստորին հոսանքներ ընկած տարածքներում: Այնտեղից, մ.թ.ա. հինգերորդ հազարամյակի երկրորդ կեսին նրանց մի մասը՝ ապագա անատոլիացիների նախնիները Կովկասի վրայով կարող էին անցնել Անդրկովկաս, ապա՝ Փոքր Ասիա, իսկ տեղում մնացած մասը դառնալ հիմքը հետագա տափաստանային «բուն հնդեվրոպական» Յամնայա մշակույթի, որից հետագայում սկիզբ առան մյուս բոլոր հնդեվրոպացիները (Lazaridis et al. 2024): Այս հնարավորությունը չի փոխում վաղնջահայերի՝ մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսից Հայկական լեռնաշխարհում գտնվելու՝ սույն հոդվածի համար կարևոր թվագրությունը:

[7] Աբրահամյան 2004, Abrahamian 2022:

է լաբիրինթոսի՝ որպես «լաբրիսի տուն» ընկալումը, հմմտ. հուն. λάβρυς «լաբրիս, կրկնակի տապար» և λαβύρινθος «լաբիրինթոս, Մինոտավրոսի կացարանը»[8]:

Մեր աշխատանքներում մենք փորձել ենք ցույց տալ, որ՝ 1. տապարացուլը եղել է հասարակության ավագ անդամների իշխանության պատվանշան, մի տեսակ՝ ամպրոպի և ռազմի աստծու «շքանշան»[9], և 2. այդ հորինվածքը ծագում է տեղական միջինբրոնզեդարյան (XXIV-XVI դդ. մ.թ.ա.) առասպելաբանական պատկերացումներից[10]: Առաջին կետի առթիվ կարելի է ասել, որ տապարացլերն ի հայտ են գալիս հասարակության աննախադեպ ռազմականացման դարաշրջանում, հատկապես տարեց՝ հեղինակավոր ռազմիկների դամբարաններից[11], ինչը և հաստատում է նրանց՝ հատուկ պատվանշան լինելու հանգամանքը: Մեր նյութի համար ավելի կարևոր է երկրորդ կետը: Տապարացլի հորինվածքը հիշեցնող առաջին պատկերները հանդիպում են արդեն միջին բրոնզե դարի ամենաաչքի ընկնող հուշարձանների՝ վիշապ-քարակոթողների վրա: Դրանցից շատերն ունեն ուղղաձիգ կանգնած ձկան տեսք, որոնց գլխին փռված է ցլի մորթի, իսկ մի մասի վրա կան ցլի մորթու պատկերներ՝ փռված եռամաս ծառի տեսքով (ցլի գլուխը ներկայացնում է ծառի գագաթը, եղջյուրներն ու ոտքերը՝ վեր բարձրացող ճյուղեր, նման բարդու կամ սոճու ճյուղերի, իսկ մարմինը և պոչը՝ բունը): Ցլերի և նրանց մորթիների համանման պատկերներ հանդիպում են նաև Հայաստանի ժայռանկարներում՝ հաճախ շատ սխեմատիկ տեսքով (աղ. 2): Ակնհայտ է, որ տապարացուլը համադրելի է այդ պատկերների հետ, իսկ ցլի մորթին կարևոր դեր է կատարել հասարակության ծիսական կյանքում: Ցլի գլխի շուրջը եղած շրջանակները համեմատելի են ցլի եղջյուրների և ոտքերի հետ, միայն հետին ոտքերը, ելնելով հորինվածքի առանձնահատկությունից, ձգված և բերված են առաջ, այնպես որ առարկան լաբիրինթոսի տեսք է ընդունել:

---

[8] Կրկնակի տապարի և լաբիրինթոսի ու Մինոտավրոսի առասպելի վերաբերյալ տե՛ս Лосев 1957, 114-121, 206-235. այդ բառերի ստուգաբանական կապը վիճարկվում է, բայց այն, անկասկած, հավանական է, իսկ առասպելում հանդես է գալիս գոնե «ժողովրդական ստուգաբանության» մակարդակով, տե՛ս Лосев 1957, 120, հմմտ. Beekes 2010, 819:

[9] Petrosyan 2022.

[10] Պետրոսյան 2015, 26-27, 38-42, 2022, Petrosyan 2022:

[11] Երկաթի դարի սկզբից Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի է ունենում հասարակության ռազմականացման բուռն գործընթաց: Ի հայտ է գալիս սոցիալական նոր խավ՝ ռազմիկների դասը: Այդ համատեքստում հատկապես լավ է ուսումնասիրված Հոռոմի դամբարանը, որտեղ պարզ տարբերակվում են քառասունն անց տղամարդկանց թաղումները: Հենց այդտեղից են գտնվում ռազմական գերազանցության տարբերանշանները՝ շտանդարտներ, սվաստիկաներ ևն, որոնց թվում են և տապարացլերը (տե՛ս Բադալյան, Աղեկյան 1994, Ավետիսյան, Մկրտչյան 1994, Мкртчян 2001, 54-56, Геворгян 2010, 203, Ավետիսյան 2014, 57, 65):

Աղյուսակ 1



1. Տապարացլեր (Avetisyan et al. 2018), 2. Դեկորատիվ ասեղ-տապարացլեր Շիրակավանից, 3. Տապարացուլ և վաղերկաթեդարյան տապարիկ (Абраамян 2022)

Աղյուսակ 2



1. Տապարացուլ հիշեցնող ցլի մորթու պատկերներ վիշապաքարերի վրա և ժայռապատկերում (Պետրոսյան 2015), 2. Դասական լաբիրինթոս կրետեական դրամի վրա (մ.թ.ա. առաջին հազարամյակի երկրորդ կես), 3-4. Լաբիրինթոս և «կայծակ» նշանագրով միջինբրոնզեդարյան անոթներ

Աղյուսակ 3

1

2

3

4

5

6

7

8

1. Առաջնորդի արծաթե դեկորատիվ տապարիկ Քարաշամբից (մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջին դարեր), 2. Իրանական ցլագլուխ գուրզ (Մետրոպոլիտեն թանգարան, Նյու-Յորք), 3. Ֆերիդունի դիմանկարը. հեղինակ Հաջի Աղա-խան (XIX դ. սկիզբ), 4. Պարաշուռամա, 5-6. Թեշուբը, սինկրետացված անատոլիական ամպրոպի աստվածների հետ, 7. Թեյշեբա (Կարմիր բլուր), 8. Պրոկրուստեսին սպանող Թեսևսը

Քարի քանդակների և բրոնզե առարկայի պատկերները, թեև, այսպիսով, ծագում են միևնույն արխետիպային նախօրինակից՝ ցլի մորթուց, որը վերածվել է առասպելաբանական ծառի կամ լաբիրինթոսի, տարբեր դարաշրջանների և ոճերի ստեղծագործություններ են: Վիշապաքարի կամ ժայռապատկերի ցլի մորթիները վաղնջական մի ծեսի՝ քիչ թե շատ ռեալիստական պատկերումներ են, մինչդեռ բրոնզե առարկան շատ ավելի ուշ շրջանի պայմանական-սխեմատիկ հորինվածք է:

Նյութի հետագա շարադրանքի համար անհրաժեշտ է ներկայացնել որոշ տեղեկություններ Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IV-III հազարամյակներում հնագիտական մշակույթների հաջորդականության վերաբերյալ: Էնեոլիթից հետո, մ.թ.ա. IV հազարամյակի կեսից մինչև մ.թ.ա. III հազարամյակի կեսերը, այստեղ ծաղկում էր վաղբրոնզեդարյան կուրարաքսյան մշակույթը: Նրա բնութագիրներից էին բնակչության մեջ արտահայտված սոցիալական շերտավորման բացակայությունը և խաղաղ, հողագործական նստակյաց կենսակերպը բնակավայրերում: Մ.թ.ա. III հազարամյակի կեսերից այստեղ ի հայտ են գալիս բացարձակապես նոր երևույթներ. նոր, մարտաշունչ գաղափարախոսություն ունեցող և վառ արտահայտված սոցիալական շերտավորմամբ բնութագրվող ցեղերի ներհոսք, առաջնորդների ճոխ թաղումներ կուրգաններում (այդ առումով առանձնապես աչքի է ընկնում Թռեղք-վանաձորյան մշակույթը): Շուտով բնակավայրերը և նախորդ հին մշակույթը կործանվում են, և իշխող է դառնում (կիսա) քոչվորական կենսակերպը: Այս եկվորները շատ առումներով հիշեցնում են հնդեվրոպական ռազմիկ-նվաճողներին: Մշակույթի որոշ առանձնահատկություններ՝ կուրգանային թաղումները, վիշապաքարերի և նյութական մշակույթի հուշարձանների հիման վրա վերականգնվող առասպելաբանության նմուշները ևս մատնանշում են եկվորների հին երկիրը՝ հնդեվրոպացիների «տափաստանային» նախահայրենիքը, իսկ նորագույն հնագենետիկական ուսումնասիրությունները անառարկելիորեն հաստատում են դա[12]:

Քննությունը ցույց է տալիս, որ վիշապաքարերը հնդեվրոպական ամպրոպային առասպելի պաշտամունքի ատրիբուտներ են: Ըստ Վ.Վ. Իվանովի և Վ.Ն. Տոպորովի, ամպրոպի աստծու հակառակորդ օձ-վիշապի անունն այդ առասպելում հանգում է *wel- արմատին: Հայերենում վերջինիս կանոնավոր արտացոլումն է *գեղ*-ը, և հնում, մինչև իրանական *վիշապ* բառի փոխառումը, այդ քարակոթողները կոչվել են հենց *գեղ*: Այդ մասին են վկայում հատկապես տեղանվանաբանական տվյալները. այսպես, վիշապաքարերը մեծագույն խտությամբ հանդիպում են Գեղամա լեռներում (150-ից 60-ը), Գեղարքունի, հնում՝ Գեղաքունի (ուրարտ. արձանագրություններում՝ Uelikuni/ Uelikuḫi), գավառում: Այդ կոթողների երկու ամենամեծ խմբերը գտնվում են Գեղ լեռան գագաթին (որի հարևան լեռը կոչվում է Աժդահակ՝ իրանական առասպելաբանության օձ-վիշապի անունով) և Գեղի ամրոցի կողքին: Կոթողների ձևն ու դրանց պատկերները ևս կապված են ամպրոպային առասպելի հետ. ձկան տեսքով վիշապաքարերը կարող են դիտվել որպես ամպրոպի աստծու հակառակորդ ձկնակերպ օձ-վիշապի արձաններ[13], ցուլը եղել է ամպրոպի աստծու խորհրդանիշը հին մերձավորարևելյան և հնդեվրո-

[12] Lazaridis 2022a, Suppl. 272-280, Anthony 2024, 11-12, Պետրոսյան, Պայլան 2023, 13-15:
[13] Петросян 1987, Պետրոսյան 2015, 33-36.

պական ավանդույթներում (Иванов 1980), իսկ աստծուն զոհաբերել են իր իսկ սիմվոլ հանդիսացող կենդանին[14]:

Հին Մերձավոր Արևելքում ամպրոպի աստծու զենքն էին մահակը, մուրճը կամ (հաճախ կրկնակի) տապարը, հին Հնդկաստանում՝ vajra-ն՝ «գուրզ-կայծակը», սլավոնների, գերմանների և կելտերի մեջ՝ տապարը կամ մուրճը, Կովկասում՝ տապարը[15]: Հնդեվրոպական ժողովուրդների ամպրոպի աստվածը ռազմական (ըստ Ժ. Դյումեզիլի՝ «երկրորդ») գործառույթի կրողն էր և մարմնավորում էր արխաիկ ռազմիկի կերպարը: Նշված զենքերը՝ գուրզը, մուրճը և տապարը առաջացել են արխաիկ զենքից՝ մահակից քարե, ապա՝ մետաղե գլխիկով կացնի զարգացման շնորհիվ (մահակի վրա՝ քարե գլխիկ, որը հետագայում փոխարինվել է մետաղով): Հատկանշական է, որ ֆիննական լեզուներում արիական vajra-ն փոխառվել է «մուրճ/կացին» նշանակությամբ (հմմտ. ֆիննական vasara «մուրճ» и մորդվ. užer «կացին»)[16]: Մուրճը եղել է ամպրոպի աստծու զենքը նաև հնագույն հայկական ավանդույթում, իսկ «Սասնա ծռերի» հերոսների «թուր կեծակին» նորամուծություն է[17]:

Լավագույնս պահպանված հնդեվրոպական՝ հնդկական ավանդույթում ամպրոպի աստված Ինդրան նմանեցվում է ցլի, իսկ նրա՝ վաջրայուվ հարվածը՝ կայծակի հետ: Իր գլխավոր սխրագործության մեջ նա վաջրայի հարվածներով է հաղթում Վրտրա օձ-վիշապին: Մեր նյութի համար բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում հնդկականին մերձավոր իրանական ավանդույթի տվյալները, որտեղ հնդ. վաջրային համապատասխանում է հին պրսկ. vazra-ն և նոր պրսկ. gorz-ը (որոնցից ունենք հայ. *վազր* և *գուրզ*): Զրադաշտի ռեֆորմից հետո իրանական կրոնում տեղի են ունեցել մեծ փոփոխություններ, և ամպրոպի աստծու զենքը, ռազմի աստծու գործառության հետ անցել է Միթրա/Միհրին: «Ավեստայում» Միհրը գլխավոր հակառակորդն է չար ուժերի տիրակալ Ահրիմանի, որն ամեն ինչից շատ վախենում է նրա գուրզից՝ աշխարհի ամենահզոր և հաղթական զենքից[18]: Ինդրայի և Վրտայի հակամարտության հնդկական առասպելի հին իրանական համա-

[14] Հին միջագետքյան ամպրոպի և փոթորկի աստծու հնագույն խորհրդանիշն է եղել առյուծ-վիշապը: Ցուլը սկսում է փոխարինել նրան մ.թ.ա. III հազարամյակի վերջերից (Schwemer 2008, 31-36): Կարելի է կարծել, որ դա կապված է եղել մ.թ.ա. III հազարամյակի կեսերից տարածաշրջանում հնդեվրոպացիների հայտնվելու հետ:

[15] Հին մերձավորարևելյան ավանդույթների վերաբերյալ տե՛ս Дьяконов 1990, 142, հնդեվրոպականների համար՝ Иванов, Топоров 1974, 93, 95, Կովկասի համար՝ Сефербеков 2005, 77:

[16] Տե՛ս, օրինակ, West 2007, 251-254:

[17] Տե՛ս Պետրոսյան 2020, 60 և ստորև: Միջին բրոնզի դարաշարջանից Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում ի հայտ են գալիս նոր տիպի փոքր տապարներ, որոնք, ի տարբերություն հին բրոնզեդարյանների, կարող էին ունենալ միայն սիմվոլիկ նշանակություն, որպես իշխանության ատրիբուտ (աղ. III): Պետք է կարծել, որ այդ նորամուծությունը կապված էր հնդեվրոպացիների ներթափանցման հետ, որոնց մեջ դրանք համարվել են ամպրոպի/ռազմի աստծու և նրանց երկրային համապատասխանության՝ ցեղային առաջնորդների ատրիբուտներ (Պետրոսյան 1997, 110):

[18] "Mihr Yasht" 96, 132, տե՛ս EIr s.v. Mihr Yašt.

պատասխանությունն է Թրաետաոնա հերոսի և Աժի Դահակա օձ-վիշապի մենամարտը: Միջնադարյան «Շահնամեում» այդ հերոսները հանդես են գալիս Ֆերեդուն և Զահհակ անուններով, ընդ որում, Ֆերեդունը հաղթում է Զահհակին հենց Միհրի «ցլագլուխ» տապարով[19]. Ցլագլուխ գուրզը, ակնհայտորեն, ներկայացնում է ցլի՝ ամպրոպի աստծու կերպարը (կոթը՝ մարմինը, հարվածող մասը՝ գլուխը). Զրադաշտական ավանդույթն այդ գուրզի ծագումը կապում է պիղծ և անօրեն վիշապ-արքա Զահհակի դեմ ապստամբության առաջնորդ Կավե դարբնի հետ, որը դառնում է իրանական հնագույն արքայատոհմի հիմնադիրը: Կավեն իր՝ ցլի մորթուց կարված գոգնոցը հագցնում է նիզակի ծողին՝ որպես դրոշ: Այդ դրոշը դառնում է իրանական արքաների խորհրդանիշը մինչև սասանյան դարաշրջանի ավարտը: Եվ մինչև հիմա էլ զրադաշտական քուրմ-մոբեդները կրում են ցլագլուխ գուրզեր, որոնք կոչվում են «Միհրի/Ֆերեդունի գուրզ» (Gorz-e Mehr, Gorz-e Ferēdun, տե՛ս աղ. 3), և կարծում, որ Միհրը օրական երեք անգամ նետում է իր գուրզը դժոխքի վրա չար ուժերին սարսափեցնելու համար[20]:

Այս իրանական տվյալներն այնքան են հիշեցնում վիշապաքարերի և տապարացլերի մասին ասվածը, որ դրանք կարելի էր համարել Թրաետաոնայի և Աժի Դահակայի առասպելի հնագույն արտացոլումներ: Իրոք, վիշապ-քարակոթողները հաճախ ներկայացնում են քարե սյուներ, գագաթին՝ ցլի գլուխ և, ինչպես և տապարացլերը, հիշեցնում են ցլագլուխ գուրզ: Այդ հիման վրա կարելի էր կարծել, որ վիշապաքարերը և տապարացլերը ստեղծվել են հնդիրանական նախալեզվի կրողների կողմից (քանի որ վերջինիս բաժանումը հնդկական և իրանական ճյուղերի տեղի է ունեցել առաջին վիշապաքարերի դարաշրջանից հետո): Բայց հնդիրանական ավանդույթում չկան լաբիրինթոսի առասպելույթի նկատելի հետքեր, ինչը տապարացլի հիմնական բնութագրիչներից է: Հնագենետիկական տվյալները ևս խոսում են դրա դեմ[21]:

Կարծում են, որ հնդիրանցիները՝ արիացիները, մերձավոր կապ են ունեցել հույների և հայերի նախնիների հետ, որոնց համար վերականգնվում է հնդեվրոպական մայր լեզվից բաժանվելուց հետո հունա-հայ-արիական միասնության դարաշրջանը[22]: Եվ, հնդիրանականից զատ, հենց հունական և հայկական ավանդույթներում է պահպանվել հնդեվրոպական *weh$_2$ĝ- «խփել, ջախջախել» և *weh$_2$ĝ-ro- «վաջրա, ամպրոպի աստծու կայծակի զենքը» արմատներով ձևավորված առասպելույթը: Հունարենում վաջրայի համապատասխանությունն ի հայտ է գալիս հերոս Մելեագրոսի անվան մեջ

[19] Липкин 1959, 42.
[20] EIr, s.v. Gorz.
[21] Պետրոսյան, Պալյան 2023, 18:
[22] Martirosyan 2013, գրականությամբ:

(Μελέαγρος < *Melewagros)[23]: Իսկ հայերենում *weh$_2$ĝ - արմատը հանդես է գալիս Արագած լեռնանվան մեջ, որտեղ առաջին մասը Արա դիցանունն է, *գած*-ը՝ *weh$_2$ĝ-ի կանոնավոր արտացոլումը: Ամպրոպի աստծու զենքի հիշողությունը պահպանվել է նաև Գրիգոր Լուսավորչի տեսիլքի լեգենդում, որտեղ Հայաստանի կենտրոնը՝ Արարատյան դաշտը կամ «Արայի դաշտը» վերափոխվում՝ վերաստեղծվում է դիցաբանական հերոսի կողմից մայրաքաղաքի կենտրոնին ոսկե մուրճով հարվածից (Ագաթանգեղոս § 735. վերականգնվող առասպելում Արագած լեռը և «Արայի դաշտը» ստեղծվել են աստծու՝ իր զենքով առասպելաբանական օձ-վիշապին և նրա բնակավայր ստորերկրայքին հասցրած հարվածի հետևանքով)[24]:

Միջնադարյան աղբյուրներից հայտնի հին հայկական նշանագրերում սխեմատիկ կրկնակի տապար հիշեցնող նշանը (կից գագաթներով երկու եռանկյուն) կոչվում է «կայծակ»: Կայծակի այդ նշանը հաճախ է հանդիպում նաև Հայաստանի հին ժայռապատկերներում[25]: Միջին բրոնզի դարաշրջանի արվեստում կան նաև լաբիրինթոսի, կրկնակի տապարի և կայծակի առասպելաբանական կապն արտացոլող օրինակներ՝ որոշ կավե անոթների վրա այդ նշանները պատկերվել են լաբիրինթոս հիշեցնող նկարների կողքին: Ակնհայտ է, որ դրանք հանգում են «ամպրոպի աստված, լաբրիս և լաբիրինթոս» առասպելաբանական համալիրին (աղ. II).

Թեշուբ/Թեյշեբան, հայկական ամպրոպի աստվածը և հունական Թեսևսը

Խուռիական ամպրոպի աստված Թեշուբի անունը (սեպագիր Tešub/Teššub, Tešup/Teššup, խեթ. Tešupas, կարդալ՝ Teš(š)ob/p-) վկայված է մ.թ.ա. III հազարամյակից, սակայն նա դառել է խուռիների գլխավոր աստվածը, հավանաբար ուշ, մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսին: Իսկ որպես խուռիական դիցակիր անունների բաղադրիչ՝ այն չի հանդիպում մ.թ.ա. XV-XIV դարերից վաղ[26]:

Այդ աստվածը սովորաբար համարվում է խուռիական, և նրա անունով կազմված անձնանունները համարվում են այդ անձանց խուռիական ծագման ցուցիչ: Սակայն Թեշուբը չունի ընդունելի խուռիական ստուգաբանություն[27]: Ի. Գելբը կարծում էր, որ նրա անունը կարող էր փոխառված լինել ինչ-որ մի նախախուռիական լեզվից, իսկ Է. Լարոշը գտնում էր, որ Թեշուբի գաղափարախոսությունն օտար էր խուռիներին[28]: Թեշուբի նշանավոր հա-

[23] Watkins 1995, 408-413.
[24] Պետրոսյան 2022:
[25] Մարտիրոսյան 1973, 22-24:
[26] Gelb 1944, 115, Вильхельм 1992, 88–89, Schwemer 2001, 445.
[27] Տե՛ս, օրինակ, Schwemer 2001, 444-445, Anm. 3698:
[28] Gelb 1944, 30, 55, 106-107, Laroche 1976, 96-97.

կառակորդ Ուլլիկումմիի անունը հաճախ համարվել է խուռիական, սակայն նրա խուռիական մեկնաբանությունը, ամենայն հավանականությամբ, «ժողովրդական ստուգաբանություն» է[29]:

Թեշուբի պաշտամունքի ամենակարևոր կենտրոնն էր Հալաբ (ներկայիս Հալեպ) քաղաքը, որտեղ, մ.թ.ա. երկրորդ հազարամյակի առաջին դարերում նա նույնացվել էր տեղի ամպրոպի աստծու՝ Ադդուի հետ: Թեշուբի պաշտամունքը տարածված էր Սիրիայից մինչև Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններ և Փոքր Ասիա (որտեղ նա սինկրետացվել էր տեղի խեթական և լուվիական ամպրոպի աստվածների հետ): Թեշուբի կնոջ Ḫebat անունը (տարբերակներ՝ Ḫibat, Ḫipatu, Ḫapatu, Ḫiba, Ḫipa), ակնհայտորեն, խուռիական չէ, այլ՝ սեմական, և նշանակում է «Հալեպուհի» (այսինքն՝ Հալաբի աստվածուհի)[30]: Թեշուբի, ինչպես և հինմերձավորարևելյան մյուս ամպրոպի աստվածների զենքն էր տապարը կամ կրկնակի տապար-լաբրիսը: Հենց այդ պատճառով էլ, Կարմիր բլուրից հայտնաբերված՝ մի ձեռքում տապար, մյուսում մուրճ բռնած արձանիկը նույնացվել է նրա ուրարտական կրկնակ Թեյշեբայի հետ[31]:

Թեշուբ/Թեյշեբայի կերպարը շատ մոտ է հնդեվրոպական ամպրոպի աստծուն: Գերմանական, բալթիական և սլավոնական ամպրոպի աստվածների զենքն էր, ինչպես ասվեց, տապարը կամ մուրճը, որն, ակնհայտորեն համադրելի է Թեշուբ/Թեյշեբայի տապարի և մուրճի հետ: Հնդեվրոպական ամպրոպի աստվածը խփում է լեռանը/ժայռին և հաղթում իր հակառակորդ օձ-վիշապին[32], իսկ Թեշուբի ամենահզոր հակառակորդն էր ժայռից ծնված և անընդհատ աճող քարե հրեշ Ուլլիկումմին[33], որի անունը համադրելի է հնդեվրոպական առասպելի օձ-վիշապի *wel- անվան հետ[34]: Թեշուբի կենդանական խորհրդանիշն էր ցուլը, իսկ Թեյշեբային զոհաբերում էին ցլեր և խոյեր, և նրան, ինչպես և ուրարտական մյուս աստվածներին, պատկերում էին ցլի եղջյուրներով:

Հայաստանում, իրանական հզոր ազդեցության հետևանքով, հնագույն բնիկ աստվածների անունները փոխարինվել էին իրանական անուններով, իսկ նրանց կերպարները տեղափոխվել ավելի ցածր՝ հայոց ազգածին նա-

---

[29] Laroche 1976-77, 279, Petrosyan 2016, 135.

[30] Archi 1998, 42.

[31] Пиотровский 1944, 277, 279, աղ. III:

[32] Иванов, Топоров 1974.

[33] Hoffner 1990, 52-61.

[34] Հմմտ. և վիշապ-քարակոթողների երկրի անունը՝ Ueliku-ni/ḫi, տե՛ս Петросян 1987, Petrosyan 2002, 81-83, 2016, 134-135, 140: Ուլլիկումմին հաճախ ստուգաբանվում էր խուռիերեն, «Կումմի (քաղաքը) կործանող» իմաստով, հմմտ., օրինակ, Иванов 1982, 158-159: Սակայն մեր մի հոդվածի (Петросян 1987) տպագրությունը երաշխավորող նամակում Վ. Իվանովը համաձայնեց, որ Ուլլիկումմին կարող է կապված լինել ուրարտ. Ueliku-ni/ḫi երկրանվան և օձ-վիշապի հնդեվրոպական անվան հետ:

հապետների՝ էպիկական հերոսների մակարդակ[35], որտեղ Թեշուբ/Թեյշեբային համապատասխանում է հայոց երկրորդ անվանադիր նախնի Արամը: Հնդեվրոպական համատեքստում նրա անունը համապատասխանում է հնդկական Ռամա (Rāma), անվանը, հնդեվրոպական *$h_2$re$h_1$mo- «մուգ, սև» արմատից, իսկ կերպարը՝ առասպելական Ռամաներից առաջինին՝ Պարաշուռամային (Paraśurāma)՝ «տապարով Ռամային»[36]: Այդ Ռամաներից առավել հանրահայտը՝ «Ռամայանա» էպոսի հերոսը, հանդես է գալիս որպես ամպրոպային Ինդրայի վիպական փոխակերպումը[37], որը, ինչպես և այլ ամպրոպային կերպարներ, նույնպես կապված է «սևի» հետ[38], իսկ առաջին Ռամայի տապարի անվանումը՝ paraśu, ստուգաբանորեն համապատասխանում է հուն. πέλεκυς «(կրկնակի) տապար, լաբրիս» բառին[39]:

Ասվածի հիման վրա հավանական է թվում, որ Teš(š)ub/Teišeba դիցանունն ունենա հնդեվրոպական ծագում: Հաշվի առնելով ամպրոպի աստվածների կապը տապարի հետ՝ այդ դիցանունները կարելի է համեմատել հնդեվրոպական *tekŝ- «տապար, կացին», «ստեղծել, սարքել, հատկապես կացնով», հմմտ. ավեստ. taša-, հին բարձր գերմ. dehsa «կացին», հայ. (բրբռ.) *թեշի/թեշիկ* «իլիկ» (իմաստի զարգացման համար հմմտ. հին բարձր գերմ. dehsa «կացին» և միջին բարձր գերմ. dëhse «իլիկ»)[40]: *Tekŝ- արմատը բնութագրում է տիեզերածին գործողությունը արարիչ աստծու, որի դերում ամպրոպային առասպելում հանդես է գալիս ամպրոպի աստվածը: Հենց այդ առնչությամբ պետք է դիտվի Հայկական լեռնաշխարհի հնագույն պետություններից Հայասայի ամպրոպի աստծու մի մակդիրը՝ սեպագիր ^{D}U takšanna- «ամպրոպի աստված takšanna-»[41], որը վաղուց ստուգաբանվել է tekŝ- արմատով, հմմտ. խեթ. takš- «անել, սարքել», հնդ. takšan- «հյուսն», ավեստ. tašan- «արարիչ, ստեղծող» ևն[42]: Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի երկու տարբեր ավանդույթներում ամպրոպի աստվածը կապված է եղել հնդեվրոպական *tekŝ-արմատի հետ՝ Teššub/Teišeba-ն և ^{D}U takšanna-ն նույն արմատի համաժամանակյա արտացոլումներ են երկու տարբեր լեզուներում (ընդ որում, երկրորդը, հնարավոր է, որ հնդիրանական է)[43]: Teššub (Teššob) /Teišeba անվան երկրորդ մասի համար հմմտ. հնդեվր. *$h_1$ep- «վերցնել, բռնել», արմատը, p>b и b=v/w արտացոլումներով (համապատասխան դիր-

[35] Պետրոսյան 2020, 35-42:
[36] Պետրոսյան 1997, 18, Petrosyan 2002, 45-52, աղ. III:
[37] Տե՛ս, օրինակ, Puhvel 1987, 92-93:
[38] Petrosyan 2017, 174.
[39] Beekes 2010, 1166-1167.
[40] Տե՛ս Petrosyan 2002, 49, Martirosyan 2010, 285-286:
[41] KUB XXVI, 39, IV, 32.
[42] Petrosyan 2002, 49, հմմտ. Джаукян 1964, 55:
[43] Petrosyan 2018.

քերում՝ բնորոշ խուռիերենին և ուրարտերենին), հնդեվրոպական *-eh$_2$ > -ā ածանց/վերջավորությամբ, որը համընկնում է մի շարք ուրարտական դիցանունների վերջավորությանը[44]: Այսպիսով, Teššob/Teišeba անունը կարելի է մեկնաբանել որպես «տապար բռնող»: Այդ մեկնաբանությունը համադրելի է Ինդրայի համանման՝ «վաջրա բռնող» և նման նշանակություններով մակդիրների հետ, հմմտ. vajradakṣiṇa «աջ (ձեռքին) վաջրա բռնած», vajrabāhu, vajrabadha, vajrapāṇi, vajrahasta «վաջրայածեռն, վաջրա ունեցող», vajradhara «վաջրա բռնող» ևն[45]:

Թեյշեբա անունը պետք է կարդալ T^{h}eiš/seb/wa (հայ-ուրարտական լեզվական համապատասխանություններում ուրարտ. t = թ, š = շ/u, b = բ/վ/ւ)[46]: Այս դիցանունը համադրելի է հին հունական հերոս Թեսևսի (Θησεύς /Thēseus/) անվան հետ, որը զուրկ է ընդունված ստուգաբանությունից (հմմտ. հատկապես ուրարտական Թեյշեւա /T^{h}eišewa/ ձևը. հունարենում չկա շ, և այն հաղորդվել է u-ով, իսկ վերջավորությունը՝ համապատասխանեցվել համանման հունական դիցաբանական անուններին՝ Achilleus, Morpheus, Orpheus ևն)[47]: Թեսևսը սպանում է Պրոկրուստեսին կրկնակի տապար-լաբրիսով[48], իսկ նրա հանրահայտ սխրագործությունը՝ Մինոտավրոսի սպանությունը տեղի է ունենում լաբիրինթոսում, հմմտ.՝ այդ բառի ավանդական՝ «լաբրիսի տուն» ստուգաբանությունը: Թեսևսի կնոջ՝ ամազոնուհի Հիպպոլիտեի (Ἱππολύτη /Hippolytē/ «ձիերն արձակող») անունը՝ կարելի է դիտել որպես Թեշուբի կնոջ՝ Ḫebat/Ḫipa «Հալեպուհի» անվան «ժողովրդական ստուգաբանական» վերաիմաստավորման արդյունք: Այդ համատեքստում հատկանշական է, որ արևմտյան Փոքր Ասիայում՝ Լյուդիայում և Կարիայում պաշտամունքի առարկա դարձած լաբրիսը՝ լաբրանդական Զևսի զենքը (Ζεὺς Λαβρανδεύς, հմմտ. լաբիրինթոս), Հերակլեսը խլել էր Հիպպոլիտեից[49]: «Լաբրիս և լաբիրինթոս» առասպելույթի հետքերը, ինչպես տեսանք, Հայկական լեռնաշխարհում ի հայտ են գալիս մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսից, և ամազոնուհիներն էլ սովորաբար տեղայնացվում են մեր լեռնաշխարհի մերձակայքում (Կովկաս և Փոքր Ասիա): Թեսևսի այցելությունն անդրաշխարհ, որտեղ նա մի քանի տարի է անցկացնում մոռացության

---

[44] Խուռա-ուրարտական շրթայինների, խուռ. *u*-ի և ուրարտ. *e*-ի համապատասխանության և ուրարտ -*a* վերջածանցի վերաբերյալ տե՛ս Хачикян 1985, 35-38, 43, 58. իսկ Teššub-ի կրկնակի šš-ն կարող է արտացոլել *kŝ>š անցման միջանկյալ վիճակը:

[45] Monier-Williams 1899, 913-914. Թեշուբ/Թեյշեբայի այդ ստուգաբանությունը տե՛ս Petrosyan 2002, 49, 2012, 148-150:

[46] Ջահուկյան 1987, 430-431:

[47] Petrosyan 2002, 49.

[48] Лосев 1957, 118, աղ. III:

[49] Плутарх, «Греческие вопросы», 45.

գահի վրա, համադրելի է փոքրասիական ամպրոպի աստծու անհետացման և Թեշուբի՝ անդրաշխարհ այցելության հետ[50]:

Ո՞ր հնդեվրոպական լեզվից կարող էին փոխառված լինել Թեյշեբայի և Թեսևսի անունները: Ելնելով առաջարկված *tekŝ- +*$h_1$ep- ստուգաբանությունից և հաշվի առնելով անվան ուրարտական և հունական T^heišewa և T^hēseus ձևերը, այդ լեզվին բնորոշ են եղել հետևյալ անցումները՝ *t>t‘ (=t^h), *e>ei/ē, kŝ>š, *p>w): Բոլոր հնդեվրոպական լեզուներից այդ բոլոր անցումները, համապատասխան դիրքերում, բնորոշ են միայն հայերենին[51]: Դիցանվան համար վերականգնվող *tekŝ-$h_1$ep-eh_2 նախաձևը հնագույն հայերենում կդառնար *T‘eišewa, իսկ մ.թ. առաջին դարերում տեղի ունեցած վերջին ձայնավորի անկումից հետո՝ *T‘ēšew.

Այդ անվան երկու ուշ տարբերակներ, թվում է, թե պահպանվել են Մուշ-Սասունի՝ հնում ամպրոպի աստծու (Վահագնի) պաշտամունքի կենտրոնի ժողովրդական երգերի ավանդական կրկներգերում՝ «Թըշիեբ, հայ Թըշիեբ»[52] և «Թեշիբ, Թեշիբ, Թեշիբ նայե»[53]: Մուշ-Սասունի երկրամասի հնագույն Շուբրիա թագավորության համարյա բոլոր արքաները մ.թ.ա. XIII-VII դդ. մ.թ.ա. կրել են Թեշուբ դիցանունով կազմված անուններ՝ Ligi-Tešub, Šerpi-Tešub, Kali-Tešub, Kili-Tešub, Šadi-Tešub, Ḫu-Tešub, Ik-Tešub[54], և երգերի բացականչությունների նմանությունը դիցանվանը դժվար թե պատահական լինի: Հետաքրքիր է, որ այդ բացականչություններն առավել նման են դիցանվան ուրարտական և հայկական, քան խուռիական ձևին: Մյուս կողմից, սրանք, ակնհայտորեն, աղավաղված ձևեր են, ինչը կարող է բացատրվել հին *Թեշեւ (<*Թէշեւ) դիցանվան մոռացումով, չէ՞ որ արդեն նախաքրիստոնեական դարաշրջանում հայոց մեջ ամպրոպի աստվածն էր Վահագնը, որի անունը փոխառվել է պարթևերենից մ.թ.ա. վերջին դարերում (թեև Վահագնի կերպարում էլ ի հայտ են գալիս Ինդրային և Թեշուբին չափազանց նման հնագույն հայկական աստծու հատկանիշները)[55]: Այդ բացականչությունների հիմնական տարբերությունը դիցանվան սպասելի հայերեն ձևից բառավերջի *բ*-ն է *վ*-ի փոխարեն, ինչը կարող է բացատրվել գրանցման սխալով, հնագույն բարբառային արտասանության, խուռաուրարտա-

[50] Տե՛ս Neu 1988, 15, Hoffner 1990, 20-22, Պետրոսյան 1997, 18:

[51] Այդ անցումների վերաբերյալ տե՛ս, օրինակ, Kortlandt, Beekes, 2003, 172, 173, 179, 201, 203, 205, *kŝ>š անցման համար հմմտ. հայ. բրբռ. *թեշի(կ)* «իլիկ», շ-ին նախորդող *e >ē (= ei)-ի համար՝ հին հայ. *էշ* /էյշ/ < *ekŵo-:

[52] Իշխանյան 1988, 46:

[53] Խաչատրյան ձեռագիր: Հին դիցանունների՝ հայկական և վրացական երգերի կրկներգերում պահպանման վերաբերյալ տես Сванидзе 1937, Капанцян 1956, 295, Petrosyan 2002, 8, Պետրոսյան 2017, 193-194, ծան. 460:

[54] Gelb 1944, 82-83, Պետրոսյան 2020, 48:

[55] Պետրոսյան 2021:

կան բետացիզմի՝ *բ*-ի և *վ*-ի չտարբերակման և աղավաղման հանգեցնող տաբուավորման գործոններով[56]:

Ինչպես կարող էր այդ դիցանունը փոխառվել հունարենում, ընդ որում, ավելի մոտ հայկական կամ ուրարտական **Թեյշեւա* ձևին, քան արդեն մ.թ.ա. երրորդ հազարամյակից ամբողջ Հին Արևելքում հայտնի Թեշուբին: Պետք է կարծել, որ ինչ-որ տեղ տարածության և ժամանակի մեջ շփումներ են եղել հնագույն հույների և հայերի (կամ ուրարտացիների) միջև:

Կրետեի մինոսյան ցիկլի առասպելները և հերոսները կապված են Միջերկրական ծովի արևելյան ափի՝ Լևանտի հետ: Զևսը, ցլի տեսքով, փախցնում է փյունիկյան արքայադուստր Եվրոպային և տանում Կրետե: Նրանց որդին՝ Կրետեի արքա Մինոսը, աթենացիներից մշտական տուրք է պահանջում՝ նրանք պարբերաբար՝ ինը տարին մեկ, պատանիներ և աղջիկներ պիտի ուղարկեին Կրետե, որպես կերակուր լաբիրինթոսում ապրող «կիսով չափ մարդ, կիսով չափ ցուլ» հրեշ Մինոտավրոսին: Վերջինս կարող է դիտվել որպես վերաիմաստավորված և փոխակերպված մի տարբերակը Թեշուբի արևմտասեմական համապատասխանության՝ ամպրոպի աստված Բահաղի, որին կոչել են «ցուլ» և մարդկային զոհեր մատուցել (Երեմիա 19.4-6): Երբ Մինոսը երրորդ անգամ է գալիս Աթենք՝ տուրքը ստանալու, Աթենքի արքայի որդին՝ Թեսևսը, պատանիների հետ ինքն էլ է մեկնում Կրետե, որպեսզի իր ուժերը չափի հրեշի հետ և այնտեղ, լաբիրինթոսում, սպանում է հրեշին: Այս առասպելը թվում է, թե այն ժամանակների ու դեպքերի արձագանքն է, երբ Թեյշեբայի պաշտամունք ունեցող ժողովուրդը հայտնվել է արևմտասեմական բնակչությամբ Սիրիայում և հարակից տարածքներում: Ընդ որում, Թեսևսը և Մինոտավրոսը ներկայանում են որպես Թեսևսի և Մինոտավրոսի պաշտամունքն ունեցող ժողովուրդների (հայերի կամ խուռաուրարտացիների և արևմտյան սեմիտների) անձնավորումներ: Դա համադրելի է հայոց Հայկի և Արամի՝ ամպրոպի աստծու էպիկական փոխակերպումների՝ Թեշուբ/Թեյշբայի կրկնակների առասպելների հետ, որոնք սպանում են իրենց հակառակորդներ բաբելոնցի Բելին և ասորի Բարշամին (այսինքն՝ բաբելոնյան աստված Բել-Մարդուկին և սիրիական աստված Բաալ-Շամինին)[57]:

Անտիկ ավանդույթը Թեսևսին ժամանակագրում է տրոյական պատերազմի նախորդ դարաշրջանով՝ մ.թ.ա. XIII դ.: Սիրիայում և մերձակայքում խուռիները հայտնի են շատ ավելի վաղուց: Եթե Թեյշևա անունը թվում է Թեսևսի ակնհայտ նախատիպը, ապա նույնը չենք կարող ասել նրա առասպելույթի մասին. և՛ Թեյշեբայի, և՛ հայոց հնագույն ամպրոպի աստծու

[56] Տաբուավորման համար տե՛ս Jakobson 1985, 13՝ գրականությամբ և օրինակներով (օրինակ, անգլ. oh my gosh, oh my god-ի, կամ սերբ. бора ми, броде ми «աստված իմ», бога ми-ի փոխարեն):

[57] Petrosyan 2002, 46 հտն., 57-58, 2009, 160-161, Պետրոսյան 2020, 38-41, 61-64:

առասպելները չեն պահպանվել: Իսկ այն, ինչ հայտնի է Թեշուբի մասին, այնքան էլ նման չէ Թեսևսի և Մինոտավրոսի առասպելին[58]:

Բայց «ցուլ/տապարը լաբիրինթոսում» և «տապար/մուրճը ամպրոպի աստծու զենք» առասպելույթները, ինչպես տեսանք, ի հայտ են գալիս հնագույն Հայաստանի նյութական մշակույթում (վիշապ-քարակոթողներ, տապարացլեր, հին աստվածների պատկերներ ևն): Այսինքն, պետք է կարծել, որ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային շրջանների բնակչության մեջ, սկսած միջին բրոնզից մինչև վաղ երկաթի դարաշրջանները (մ.թ.ա. XXIV-IX դդ.), շրջանառվել են Թեսևսի, Մինոտավրոսի և լաբիրինթոսի պատմությունը հիշեցնող առասպելներ:

Ժամանակակից Հայաստանի տարածքը այդ դարաշրջանում մտնում էր մի ընդարձակ ցեղամիության կազմի մեջ, որն ուրարտական աղբյուրներում կոչվում էր Etiuni կամ Etiuḫi: Ըստ մեր վարկածի, հենց այդ երկիրն է եղել հնագույն հայոց հայրենիքը մ.թ.ա. երկրորդ և առաջին հազարամյակի սկզբին, և Etiu-ni/ḫi «էթիու-ական երկիր» անվանումը եղել է Հայաստանի ուրարտական անվանումը, որը *հայ* ցեղանվան հին *հայթիո* ձևի ուրարտական հաղորդումն է[59]: Դա ևս մի անգամ հիմք է տալիս ասելու, որ խուռաուրարտական Թեշուբ/Թեյշեբայի անունը և կերպարը փոխառվել են հնագույն հայերից, թերևս մ.թ.ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսին, Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային տարածքներից: Իսկ հույները (աքայացիները) այս տարածաշրջանում՝ Կիլիկիայում հայտնվում են բրոնզի դարի վերջին և երկաթի դարի սկզբին, մ.թ.ա. երկրորդ հազարամյակների վերջին դարերում[60]: Կիլիկիան միշտ կապված է եղել Սիրիայի հետ, ընդ որում, Թեշուբի և Ուլլիկումմիի առասպելի առանցքային դրվագը տեղայնացվում է հենց Սիրիայի և Կիլիկիայի սահմանին, Խացցի (ներկայիս Ջեբել Աքրա) լեռան մոտ և Իսկանդերունի ծոցում[61]: Թեշուբի արկածները Լևանտում հուշում են, որ, ամենայն հավանականությամբ, հենց այդ աքայացիներն են փոխառել նրա կերպարը և տեղափոխել Հունաստան, որտեղ այն ենթարկվել է որոշակի փոփոխությունների և վերջնականապես հունականացվել:

---

[58] Սակայն կան տվյալներ, որոնք ակնարկում են Թեշուբի և Թեսևսի առասպելների կապի հնարավորությունը: Օրինակ, Թեսևսը Մինոտավրոսի խորթ եղբայրն է, ինչպես և Թեշուբը՝ Ուլլիկումմիի, Մինոտավրոսին զոհեր ուղարկելու իննամյա պարբերականությունը և Թեսևսի հաղթանակը երրորդ զոհաբերության ժամանակ հիշեցնում է երկնային արքայության խուռիական առասպելում արքա-աստվածների իննամյա հերթագայության կարգը՝ արքաները փոխվում են ինը տարին մեկ՝ նոր հավակնորդի հաղթանակով, և նրանցից երրորդը՝ Թեշուբը, երրորդն է, որն իր նախորդի նկատմամբ հաղթանակից հետո դառնում է հավերժական արքա (Hoffner 1990, 40-43):

[59] Պետրոսյան 2017, 181-199:

[60] Gander 2012, Brice 2016.

[61] Hoffner 1990, 55-56, Вильхельм 1992, 104.

Եզրակացություններ

Խուռաուրարտական ամպրոպի աստված Թեշուբ/Թեյշեբայի անունը և կերպարը փոխառված են Հայկական լեռնաշխարհում, վաղնջահայերից, մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կեսին:

Այդ կերպարն անցել է հին հունական ավանդույթ, որտեղ նա հանդես է գալիս Թեսևս անունով: Փոխառությունը հավանաբար տեղի է ունեցել մ.թ.ա. II հազարամյակի վերջին՝ Կիլիկիայի աքայական հույների միջոցով:

Օգտագործված գրականություն

Աբրահամյան Լ.Հ. 2004, «Տապարացուլը» լաբիրինթոսում. բրոնզեդարյան մի հորինվածքի պարզաբանման շուրջ, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն, էջ 12-14:

Ավետիսյան Պ.Ս. 2014, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դդ. (սոցիալ-մշակութային ձևափոխությունների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 92 էջ:

Ավետիսյան Պ., Մկրտչյան Ռ. 1994, Թալինի վաղերկաթեդարյան դամբարանների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության փորձ, Հայաստանի Հանրապետությունում 1991-1992 թթ., դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, էջ 24-27:

Բաղալյան Ռ., Աղեկյան Հ. 1994, Հոռոմի դամբարանադաշտի պեղումները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի կառույցներում, ՀՀ ԳԱ հրատ., էջ 67-74:

Իշխանյան Ռ. 1988, Հայ ժողովրդի ծագման և հնագույն պատմության հարցեր, Երևան, Հայաստան հրատ., 111 էջ:

Խաչատրյան Ռ. ձեռագիր, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Ռ. Խաչատրյանի ֆոնդ, N FRI: 3848:

Հմայակյան Ս.Գ. 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, ԳԱ հրատ., 160+31 էջ:

Մարտիրոսյան Հ.Ա. 1973, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտահայկական կրկնակները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 81 էջ:

Պետրոսյան Ա. 1997, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, «Վան Արյան», 208 էջ:

Պետրոսյան Ա. 2002, Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 243-270:

Պետրոսյան Ա. 2015, Երեսուն տարի անց, Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 13-52:

Պետրոսյան Ա. 2017, Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Երևան, «Անտարես», 248 էջ:

Պետրոսյան Ա. 2020, Հայկական էպոսի հնագույն ակունքները 2, Երևան, ՀԱԻ, 264 էջ:

Պետրոսյան Ա. 2021, «Վահագնի երգը» և հայկական էպոսը, Բանբեր հայագիտության, N 3, էջ 146-166:

Պետրոսյան Ա. 2022, Արագած. անունը և առասպելը, Բանբեր հայագիտության, Երևան, N 3, էջ 169-185:

Պետրոսյան Ա. 2024, Անգեղը և Տուրք Անգեղյան հայոց հնագույն դիցաբանության մեջ (տպագրության մեջ):

Պետրոսյան Ա., Պալյան Ա. 2023, Հայոց ազգածագման խնդիրը վերջին հնագենետիկական տվյալների լույսի ներքո, Ե. Գրեկյան (խմբ.), Միգրացիոն գործընթացները Հայկական լեռնաշխարհում հնագույն շրջանից մինչև 20-րդ դարասկիզբ (գիտաժողովի նյութեր), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 7-24:

Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:

Вильхельм Г. 1992, Древний народ хурриты, Москва, «Наука», 160 с.

Геворгян А.Ц. 2010, Металлопроизводство Армении в предурартское время, Халдиевым могуществом... Сборник статей к столетию Бориса Пиотровского, Ереван, «Гитутюн», с. 191-211.

Джаукян Г.Б. 1964, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, изд. АН Арм. ССР, 96 с.

Дьяконов И.М. 1990, Архаические мифы Востока и Запада, Москва, «Наука», 248 с.

Иванов В.В. 1980, Бык, Мифы народов мира, «Советская энциклопедия», т. 1, Москва, 203 с.

Иванов В.В. 1982, К этимологии некоторых миграционных культурных терминов, Этимология 1980, с. 157-166.

Иванов, В.В., Топоров В.Н. 1974, Исследования в области славянских древностей, Москва, «Наука», 342 с.

Капанцян Г.А. 1956, Историко-лингвистические работы, т. 1, Ереван, изд. АН Арм. ССР, 471 с.

Липкин С. (пер.) 1959, Фирдоусы: поэмы из Шахнамэ, Сталинабад, Таджикское государственное издательство, 523 с.

Лосев А.Ф. 1957, Античная мифология, Москва, изд. Министерства просвещения СССР, 620 с.

Мкртчян Р.А. 2001, Палеоантропология оромского могильника, Ереван, «Зангак-97», 120 с.

Петросян А.Е. 1987, Отражение индоевропейского корня *u̯el- в армянской мифологии, Вестник общественных наук Арм. ССР, N 1, с. 56-70.

Пиотровский Б.Б. 1944, Урарту, Ереван, изд. АН Арм. ССР, 365 с.

Плутарх, Греческие вопросы. http://ivka.rsuh.ru/binary/2628603_89._1367787654.63801.pdf. (downloaded 22.05.2023).

Сванидзе А.С. 1937, Названия древневосточных богов в грузинских песнях, Вестник древней истории, N 1, с. 87-93.

Сефербеков Р.И. 2005, Верховные боги (громовержцы) народов Дагестана, Вестник института ИАЭ, N 4, с. 66-92.

Хачикян М.Л. 1985, Хурритский и урартский языки, Ереван, изд. АН Арм. ССР, 196 с.

Abrahamian L.H. 2022, 'Axe-bull': an Iron-Age Iconic Anagram, in Y.H. Grekyan, & A.A. Bobokhyan (eds.), Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday, Oxford, "Archaeopress", p. 1-5.

Anthony D.W. 2024, Ten Constraints that Limit the Late PIE Homeland to the Steppes, Proceedings of the 33rd Annual UCLA Indo-European Conference. Hamburg, Buske, p. 1-25.

Archi A. 1998, The Former History of Some Hurrian Gods, In: S. Alp, A. Süell (eds.), Acts of the 3rd International Congress of Hittitology, Çorum, Sept. 16-22, 1996, Ankara, p. 39-44.

Avetisyan P., Dan R., Petrosyan A. 2018, Axes, Labyrinths and Astral Symbols: Bronze Pendants and Pins from the Armenian Highlands, Ancient West & East, N 17, p. 27-63.

Beekes R.S. 2010, Etymological Dictionary of Greek, Leiden/Boston, "Brill", 1808 p.

Bryce T. 2016, The land of Hiyawa (Que) revisited, Anatolian Studies 66, Ankara, p. 67-79.

EIr – Encyclopaedia Iranica, New York, Brill, 1985; https://iranicaonline.org/ (downloaded 10.05.2023).

Gander M. 2012, Ahhiyawa – Hiyawa – Que: Gibt es Evidenz für die Anwesenheit von Griechen in Kilikien am Übergang von der Bronze- zur Eisenzeit? Studi Micenei ed Egeo-Anatolici, N 54, S. 281-309.

Gelb I.J. 1944, Hurrians and Subareans, Chicago, Chicago University Press, 128 p.

Hoffner A. 1990, Hittite myths, Atlanta, Scholars Press, 92 p.

Jakobson R. 1985, Selected Writings, Vol. 7, The Hague, Walter de Gruyter, 410 p.

Kortlandt F., Beekes R. 2003, Armeniaca: Comparative Notes by Frederik Kortlandt with an Appendix on the Historical Phonology of Classical Armenian by R. Beekes. Ann Arbor, Caravan Books, 251 p.

KUB Keilschrifturkunden aus Boghazköi, Berlin, Mann.

Laroche E. 1976, Panthéon national et panthéons locaux chez les hourrites, Orientalia, N 45, p. 94-99.

Laroche 1976-77, Glossaire de la langue hourrite. Revue hittite et asianique XXXIV-XXXV, Paris, 323 p.

Lazaridis, I., Nadel, D., Rollefson, G. et al. 2016, Genomic Insights into the Origin of Farming in the Ancient Near East, Nature 536, p. 419-424.

Lazaridis I. et al, 2022a, The Genetic History of the Southern Arc. A Bridge between West Asia and Europe, Science.www.science.org/doi/10.1126/science.abm4247. (downloaded 10.05.2023).

Lazaridis I. et al, 2022b, A Genetic Probe into the Ancient and Medieval History of Southern Europe and West Asia, Science.www.science.org/doi/10.1126/science.abq0755. (downloaded 10.05.2023).

Lazaridis I. et al, 2022c, Ancient DNA from Mesopotamia Suggests Distinct Pre-Pottery and Pottery Neolithic Migrations into Anatolia, Science.www.science.org/doi/10.1126/science.abq0762. (downloaded 10.05.2023).

Lazaridis et al. 2024, The Genetic Origin of the Indo-Europeans, Preprint in bio Rxiv, doi: https://doi.org/10.1101/2024.04.17.589597. (downloaded 10.05.2023).

Martirosyan H.K. 2010, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Leiden, Boston, Brill, 988 p.

Martirosyan H.K. 2013, The Place of Armenian in the Indo-European Language Family, The Relationship with Greek and Indo-Iranian, Journal of Language Relationship, N 10, p. 85-139.

"Mihr Yasht" http://www.avesta.org/ka/yt10sbe.htm. (downloaded 10.05.2023).

Monier-Williams M. 1899, A Sanskrit-English dictionary, Oxford, Clarendon Press, 1333 p.

Neu E. 1988, Das Hurritische: eine altorientalische Sprache in neuem Licht, Abhandlungen der Geistes- und Sozialwissenhaftlichen Klasse der Akademie der Wissenschaften und der Literatur, N 3, Wiesbaden, Steiner Verlag, 48 S.

Petrosyan A.Y. 2002, The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, Journal of Indo-European Studies Monograph No 42, Washington DC, Institute for the Study of Man, 236 p.

Petrosyan A.Y. 2009, Forefather Hayk in the Light of Comparative Mythology, Journal of Indo-European Studies, p. 155-163.
Petrosyan A.Y. 2012, The Cities of Kumme, Kummanna and Their God Teššub / Teišeba, Archaeology and Language: Indo-European Studies presented to James P. Mallory, Washington DC, Institute for the Study of Man, p. 141-156.
Petrosyan A.Y. 2016, Indo-European *wel- in Armenian Mythology, Journal of Indo-European Studies, p. 129-146.
Petrosyan A.Y. 2017, Armeno-Indian Epic Parallels, Journal of Indo-European Studies, p. 172-186.
Petrosyan A.Y. 2018, Aryan Traces in the Onomastics of Hayasa, Iran and the Caucasus, N 22, p. 177-180.
Petrosyan A.Y. 2022, 'Axe-bull': Order of the Thunder God, In: Y.H. Grekyan, A.A. Bobokhyan (eds.), Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday, Oxford: Archaeopress, p. 385-389.
Puhvel J. 1987, Comparative Mythology, Baltimore, London, The John Hopkins University Press, 302 p.
Schwemer D. 2001, Die Wettergottgestalten Mesopotamiens und Nordsyriens im Zeitalter der Keilschriftkulturen, Wiesbaden, Harrassowitz Verlag, 1038 S.
Schwemer D. 2008, The Storm-Gods of the Ancient Near East: Summary, Synthesis, Recent Studies, Part II, Journal of Ancient Near Eastern Religions, Vol. 8 (1), p. 1-44.
Watkins C. 1995, How to Kill a Dragon, New York-Oxford, Oxford University Press, 13+613 p.

АРМЯНСКОЕ ПРОИСХОЖДЕНИЕ ХУРРО-УРАРТСКОГО ТЕШУБА/ТЕЙШЕБЫ И ГРЕЧЕСКОГО ТЕСЕЯ

Армен Петросян

Резюме

Наиболее значимыми памятниками древней Армении являются огромные каменные стелы вишапы («драконы»), первые образцы которых датируются началом эпохи средней бронзы (XXIV в. до н.э.). Подробный анализ показывает, что вишапы являлись атрибутами культа индоевропейского грозового мифа, и их, до заимствования иранского слова višap, называли индоевропейским именем мифологического Змея (*gel* < **wel-*), противника громовержца. Отголоски этого мифа имеются и в других археологических артефактах доурартской Армении.

Индоевропейский громовержец – носитель военной функции и воплощает в себе образ архаичного воина. Его оружием были молот или топор, а символом – бык. Имя хуррито-урартского бога грозы (хурр. Teššub, урарт. Teišeba /Theišewa/) не имеет приемлемой этимологии в этих языках. Его атрибуты, символ и мифы (топор, бык, победа над каменным чудовищем) напоминают образ индоевропейского громовержца. В статье представлена армянская этимология

этого теонима от индоевропейского *tek's- + *$h_1$ep- «держатель топора». Его образ, в лице Тесея (греч. Theseus), видимо, из Киликии и Леванта, через киликийских ахейцев конца второго тысячелетия до н.э. проник в греческую мифологию, став одним из ключевых фигур мифов критского цикла.

Ключевые слова – индоевропейское языкознание, индоевропейская мифология, бог грозы, хурритская мифология, Тешуб, Тейшеба, Тесей.

THE ARMENIAN ORIGIN OF THE HURRO-URARTIAN TEŠŠUB/TEIŠEBA AND GREEK THESEUS

Armen Petrosyan

Abstract

The most outstanding monuments of ancient Armenia are the huge stone steles vishaps ("dragons"), the first samples of which date back to the beginning of the Middle Bronze Age (XXIV century BC). A detailed analysis shows that they were attributes of cult of the Indo-European thunder god myth, and before borrowing the Iranian word *višap*, they were called by the Indo-European name of the mythological Serpent (*gel*< **wel-*), the adversary of the god. Echoes of this Indo-European myth are also found in other archaeological artifacts of pre-Urartian Armenia.

The Indo-European thunder god represented the military function and embodies the image of the archaic warrior. His weapon was a hammer or an axe, and his symbol was a bull. The name of the Hurrian-Urartian thunder god (Hurr. Teššub, Urart. Teišeba /Theišewa) has no acceptable etymology in these languages. Its attributes, symbol and myths (axe, bull, victory over a stone monster) resemble the image of the Indo-European thunderer. The article proposes an Armenian etymology for this theonym from the Indo-European *tek's- + *$h_1$ep- "axe holder". His image, grecized as Theseus, was borrowed by the Greeks (apparently, through the Cilician Achaeans at the end of the second millennium BC) becoming one of the key figures of the Cretan cycle.

Key words – Indo-European linguistics, Indo-European mythology, Thunder god, Hurrian mythology, Tešub, Teišeba, Theseus.